



ՀԱՎԱՔՈՒՅԹ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Սույն թվականի հունիսի 27-ին Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում հավաքույթ Վեհափառ Հայրապետի՝ Լատինական Ամերիկա՝ Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ և ապա Ֆրանսիա ուղևորության առիթով:

Հավաքույթին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հայ Եկեղեցու ներքին թեմերի թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնախումբը, Մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Էջմիածին քաղաքի, Գեղարդա և Խորվիրապի վանքերի վանահայրերը, Արարատյան թեմի թեմական խորհրդի և եկեղեցական վարչությունների անդամները և այլ հյուրեր:

Հավաքույթին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանը և Ռ. Զարգարյանը:

Հավաքույթը բաց է անում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ուղևորության մանրամասն նկարագրությունն է տալիս Հայոց Հայրապետի շքախմբի անդամ, գավազանակիր Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

Արտասահմանյան ուղևորության ընթացքում Հայոց Հայրապետի պաշտոնական հանդիպումների մասին բովանդակալից խոսքով հանդես է գալիս Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը:

Հավաքույթի վերջում Վեհափառ Հայրապետը խոսում է Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Ֆրանսիայի հայ գաղթօջախների եկեղեցական, կրթական և մշակութային կյանքի հարցերի շուրջ: